



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

18 մայիսի 2021 թվականի թիվ 64-Ա  
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ  
20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ  
ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅԻ ԵՎ  
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՄԻ ՄԵԿ ԲՈՊԵԻ ԳԻՆԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք»  
Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ  
մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշում է*.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի  
հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախընտրական  
քարոզչության ժամանակահատվածում վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը  
հանրային ռադիոյի համար 1800 (մեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ),  
հանրային հեռուստատեսության համար 45000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ  
(ներառյալ ԱԱՀ):

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

18 մայիսի 2021թ.  
ք. Երևան